ԿՈՐԻԶԱՎՈՐՆԵՐԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐ

Արևելյան պտղակեր



Վնասում է տարբեր մշակաբույսերի՝ ինչպես կորիզավոր, այնպես էլ հնդավոր: Մասնավորապես այս վտանգավոր վնասատուի թրթուրները հայտնաբերվել են ծիրանենու, դեղձենու, սալորենու, կեռասենու, բալենու, խնձորենու, տանձենու, սերկևիլենու և նշենու շվերում, ինչպես նաև դեղձենու (նեկտարենու), սերկևիլենու, խնձորենու, կեռասենու, ընկուզենու և նշենու պտուղներում: Արևելյան պտղակերի կողմից հասցրած վնասից առավել ուժեղ տուժում է դեղձենին, որի վրա առաջին վնասված շվերը ի հայտ են գալիս հենց առաջին սերնդի թրթուրների դուրս գալուց: Ձվից դուրս եկած թրթուրը շվի մեջ հիմնականում ներթափանցում է աճման կոնից: Շվի վնասված գագաթները աստիճանաբար թոշնում և չորանում են: Առաջինը վնասվում են ծիրանենու, նշենու և դեղձենու շվերը, իսկ ամռան երկրորդ կեսին վնասատուն անցնում է այլ պտղատու ծառատեսակների վրա: Մեկ պտղի մեջ կարող են կերակրվել մեկից ավելի, տարբեր հասակի թրթուրներ, ինչը տարբերակում է արևելյան պտղակերին խնձորենու և սալորենու պտղակերներից: Այս տեսակի պտղաբերությունը տատանվում է 60-100 ձվի սահմաններում:

Պայքարի միջոցառումներ – Բուսական մնացորդների հավաք ու ոչնչացում: Հողի վար և բաժակափոր:

Ֆերոմոնային թակարդների կիրառման հիման վրա նշված պատրաստուկների փոխեփոխ օգտագործում. Արրիվո 0,5 լ/հա (10լ ջրին 5մլ), Տալստար 0,8լ/հա (10լ ջրին 8մլ), Դեցիս 0,6լ/հա (10լ ջրին 6մլ), Դեցիս պրոֆի 0,1 կգ/հա (10լ ջրին 1գր), Դուրսբան 2,0լ/հա (10լ ջրին 20մլ), Ինսեգար 0,6կգ/հա (10լ ջրին 6գր), Կարատե զեոն 0,5լ/հա (10լ ջրին 5մլ), Կալիպսո 0,3լ/հա (10լ ջրին 3մլ), Սումի ալֆա 1,0լ/հա (10լ ջրին 10մլ):

Շերտավոր պտղացեց

Վնասում է ծիրանենուն, դեղձենուն, սալորենուն ինչպես նաև մի շարք այլ պտղատեսակների /նշենի, խնձորենի, արքայանարնջենի և այլն/: Թրթուրները վնասում են դալար շիվերը, կրծելով մտնում են նրանց մեջ սնվում և երկայնական անցքեր բացում այդտեղ, որի արդյունքում վնասված մասից վերև շիվը չորանում է: Մեկ թրթուրը այս կերպ կարող է ոչնչացնել 4-5 շիվ: Թրթուրները սնվում են նաև պտուղներով, կտրուկ գցելով դրանց ապրանքային տեսքը և որակը: Վնասված պտուղներից խեժ է դուրս գալիս:

Ձմեռում են թրթուրները ծառերի կեղևի փոսիկների մեջ: Մեկ վեգետացիայի ընթացքում այս տեսակը զարգանում է 3-4 սերնդով:

Պայքարի միջոցառումներ -Վնասատուի դեմ պայքարում հերթափոխելով օգտագործել Պրոտեուս (0,7 լ/հա, 10 լ ջրին 7 մլ), Սպինտոր (0,25 լ/հա, 10 լ ջրին 2,5 մլ), Ամպլիգո (0,3 լ/հա, 10 լ ջրին 3 մլ),Կարատե զեոն (0,4 լ/հա, 10 լ ջրին 4 մլ) կամ Վոլիամ տարգո (0,7 լ/հա, 10 լ ջրին 7 մլ): Անհրաժեշտության դեպքում պայքարը կրկնել 15-20 օր հետո:

Սալորենու պտղակեր

Վնասում է շլորենուն, սալորենուն, բալենուն, ծիրանենուն, դեղձենուն: Թրթուրները սնվում են պտուղներով, անցք են բացում պտղամսում, որը լցնում են իրենց արտաթորանքով: Վնասված պտուղները դադարում են աճելուց, մի փոքր գունափոխվում են ու թափվում: Վնասատուի թրթուրը սնվում է նաև երիտասարդ պտուղների կորիզով: Զարգացման ժամանակ յուրաքանչյուր պտուղ վնասվում է մեկ թրթուրի կողմից:

Պայքարը նույնն է ինչ որ շերտավոր պտղացեցի դեմ:

Սալորենու հաստոտիկ



Թրթուրը վնասում է ծիրանենու, սալորենու, շլորենու և նշենու պտուղները, առաջացնելով մասսայական պտղաթափ: Պտուղների վրա ձվադրի ծակած տեղում մի կաթիլ խեժ է դուրս գալիս, որով կարելի է տարբել առողջ և վնասված պտուղները: Թրթուրը զարգանում է սնվելով կորիզի պարունակությամբ:

Պայքարի միջոցառումներ - վեգետացիայի ընթացքում սրսկել Պիրինեքս-սուպեր 0.7լ/հա (10լ ջրին 7մլ):

Բալենու լորձնոտ աղոցող



Բալենու լորձնոտ աղոցողը վնասում է բալենուն, կեռասենուն, սալորենուն, շլորենուն սերկևիլենուն, տանձենուն: Թրթուրները սնվում են տերևի վերին կողմի պարենքիմով, անվնաս թողնելով տերևի ներքևի կողմի էպիդերմիսը: Ուժեղ վնասված ծառերի աճը համարյա կանգ է առնում, պտղաբողբոջների հիմնադրումը անբավարար է ընթանում: Այս բոլորը բացասաբար են անդրադառնում հաջորդ տարվա բերքատվության վրա: Բալենու լորձնոտ աղոցողը Հայաստանում բազմանում է կուսածնությամբ:

Պայքարի միջոցառումներ – Վերտիմեկ 1,0 լ/հա (10 լ ջրին 10 մլ.), Կարատե զեոն 0.5 լ/հա (10 լ ջրին 5 մլ.), Ամպլիգո 0.3 լ/հա (10 լ ջրին 3 մլ.), Արրիվո 0.3 լ/հա (10 լ ջրին 3 մլ), Շերպա 0.3 լ/հա (10 լ ջրին 3 մլ.):

Բալենու ճանճ

Հայաստանում բալենու ճանճը տարածված է այն բոլոր շրջաններում, որտեղ կեռասենի ու բալենի են մշակում: Ճանճը հիմնականում վնասում է կեռասենուն, ավելի քիչ բալենուն, ընդ որում առավելապես կեռասենու ուշահաս սորտերը, որովհետև վաղահաս սորտերը հասունանում են ճանճերի թռիչքից առաջ: Ձվից դուրս գալուց հետո թրթուրները անմիջապես ներթափանցում են պտղամսի մեջ և սնվում նրանով: Կեռասենու ու բալենու վնասված պտուղները հասունանալու պահին գորշանում են և նրանց վրա փտու ընկած տեղեր են առաջանում: Բալենու ճանճը ձմեռում է հարսնյակի փուլում և տարեկան զարգանում է մեկ սերնդով:

Պայքարի միջոցառումներ - Զոլոն 2,5 լ/հա (10 լ ջրին25-30 մլ.),Դեցիբել 0,6 լ/հա (10 լ ջրին 6 մլ.), Կոալ 0,35 լ/հա (10 լ ջրին 3 մլ.), Կարատե զեոն 0.5 լ/հա (10 լ ջրին 5 մլ.), Ամպլիգո 0.3 լ/հա (10 լ ջրին 3 մլ.), Արրիվո 0.3 լ/հա (10 լ ջրին 3 մլ.), Շերպա 0.3 լ/հա (10 լ ջրին 3 մլ.), Դանադիմ 1,5 լ/հա (10 լ ջրին 15 մլ.):

Թուրանական կեղծ վահանակիր

Թուրանական կեղծ վահանակիրը սնվում է ծիրանենու, դեղձենու, սալորենու, նշենու և այլ մշակաբույսերի բարակ ճյուղերի և շվերի վրա: Ձմեռում է 2-րդ հասակի թրթուրի փուլում, երիտասարդ ճյուղերի վրա, կեղևի ճեղքվածքներում, բողբոջների հիմքում, ճյուղավորությունների հանգույցներում: Գարնանը՝ ապրիլի վերջին-մայիսի սկզբին հասուն դարձած թրթուրները սկսում են ձվադրել: Ձվից դուրս եկած թափառողները հիմնականում սնվում են տերևաթիթեղի երկու մակերեսների և մատղաշ շվերի վրա: Ուժեղ վարակված ծիրանենիների երիտասարդ ճյուղերը և շվերը չորանում են, կարող են չորանալ և կմախքային ճյուղերը: Վնասատուն բազմանում է միայն կուսածնությամբ և տարեկան տալիս է մեկ սերունդ:

Պայքարի միջոցառումներ - նույնն է, ինչ որ գոտկավոր կեղծ վահանակիրինը:

Գոտկավոր կեղծ վահանակիր

Գոտկավոր կեղծ վահանակիրը հիմնականում զարգանում է դեղձենու վրա երբեմն լուրջ վնաս պատճառելով այս մշակաբույսին: Ուժեղ վարակված ծառերի մոտ պակասում է ծաղիկների քանակը, տերևները և պտուղները չեն հասնում նորմալ մեծության: Տերևները նախքան բերքի հասունանալը դեղնում և թափվում են: Հաճախ պտուղները, դեռ չհասունացած ծառն ամբողջությամբ չորանում է, պտուղները ևս չորանում և երկար ժամանակ մնում են ծառերի վրա: Համեմատաբար թույլ վարակի դեպքում չորանում են դեղձենու վարակված ճյուղերը:

Պայքարի միջոցառումներ - վեգետացիայի ընթացքում առաջին հասակի թրթուրների դեմ ծառերը սրսկել Նուրելլ Դ (1,5 լ/հա, 10 լ ջրի 15 մլ), Կարատե զեոն (0,4 լ/հա, 10 լ ջրին 4 մլ), Պրոտեուս (0,7 լ/հա, 10 լ ջրին 7 մլ), Ամպլիգո (0,3 լ/հա, 10 լ ջրին 3 մլ) կամ Ակտելլիկ (2,0 լ/հա, 10 լ ջրին 20 մլ) պատրաստուկներից մեկով: Անհրաժեշտության դեպքում սրսկումը կրկնել առաջին բուժումից 7-10 օր հետո:

Լվիճներ

Եղեգի լվիճ

Լվիճները հանդիսանում են կորիզավոր պտղատեսակների գլխավորը և վտանգավոր վնասատուներից մեկը: Պտղատու ծառերին լվիճները վնաս են պատճառում նրանց ամբողջ վեգետացիայի ընթացքում: Ծծելով տերևների, ընձյուղների և ճյուղերի հյութը դանդաղեցնում կամ բոլորովին կասեցնում են պտղատու կուլտուրաների նորմալ աճն ու զարգացումը: Դրա հետևանքով վարակված ծառերը չեն կարողանում անհրաժեշտ չափով կազմակերպել պտղաէլեմենտներ, իսկ որոշ դեպքում էլ պտուղների մի մասը մինչև հասունանալը թափվում է: Կորիզավոր պտղատեսակներին հատկապես վնասում են բալենու, եղեգի, դեղձենու, դեղձենու ցողունային և սալորենու լվիճները:

Պայքարի միջոցառումներ - վնասատուի հայտնվելուն պես սրսկել Ակտելլիկ 1.5 լ/հա (10լ ջրին 15մլ), Ակտարա 0,3 լ/հա (10լ ջրին 3մլ), Կարատե զեոն 0,5 լ/հա (10լ ջրին 5մլ), Պրոտեուս 0,7 լ/հա (10լ ջրին 7մլ), Անթիո 2 լ/հա (10լ ջրին 20մլ),Կոնֆիդոր 0.3 լ/հա (10լ ջրին 3մլ) :

Սալորենու լվիճ

Դեղձենու ցողունային լվիճ



Դեղձենու լվիճ

Բալենու լվիճ

Սև ոսկեբզեզ

Հանդիսանում է կորիզավոր պտղատեսակների լուրջ վնասատու: Վնասում է թե երիտասարդ, թե բերքատու ծառերին: Բզեզների մասսայական թռիչքը տեղի է ունենում մայիսի սկզբներին, իսկ հոկտեմբերին անցնում են ձմեռման: Բզեզները սնվում են ծառերի մատղաշ շվերի կեղևով, տերևակոթուններով, բողբոջների հիմքերով և ծաղկակոթուններով: Ձվադրումը սկսվում է հունիսի կեսերից: Ձվադրում են մեծ մասամբ հողում, ծառի բնի մոտ և ծառի արմատավզի ճեղքերում: Մեկ էգը կարող է դնել մինչև 1800 ձու: Ձվադրումից 13-14 օր հետո դուրս են գալիս թրթուրները և շարժվում դեպի ծառի արմատը, մտնում նրա մեջ: Արմատներում թրթուրները սնվում են երկու տարի, որից հետո հարսնյակավորվում: Գեներացիայի տևողությունը երեք տարի է: Հատկապես մեծ վնաս են պատճառում թրթուրները, որոնք սնվելով կորիզավոր ծառատեսակների արմատների, արմատավզի բնափայտով և կամբիալ շերտով, առաջացնում են ընդերկայնական անցուղիներ: Թրթուրներով վարակված ծառերը և տնկիները համարյա չեն աճում, տերևները գունաթափվում են և սկսում են չորանալ:

Պայքարի միջոցառումներ - այգին հիմնել չվարակված տնկիներով: Ամառվա ամիսներին ծառերը ջրել 15 - 20 օրը մեկ անգամ: Ծառերի վրայից հավաքել և ոչնչացնել բզեզներին: Ձվերից նոր դուրս եկած թրթուրների դեմ պայքարելու համար հունիսի կեսերից ծառի բնի շուրջը շաղ տալ Ագրոֆոս և հողը փխրեցնել:

Այլ վնասատուներ

Ռեկուրվարիա

Բալենու երկարակնճիթ

Կորիզավոր պտղատեսակներին զգալի վնաս են հասցնում նաև մի շարք այլ վնասատուներ:

Ռեկուրվարիա - վնասում է բոլոր պտղատու ծառատեսակներին, իսկ ավելի շատ վնասում է պատճառում ծիրանենուն: Պայքարի համար, գարնանը, թրթուրների թաքստոցներից դուրս գալու շրջանում, սրսկել Զոլոն 2,4լ/հա (10լ ջրին-24մլ), Վալսարել 1.5լ/հա (10լ ջրին-15մլ,Կոնֆիդոր 0,1լ/հա(10լ ջրին-1մլ, Կալիպսո 0,3լ/հա (10լ ջրին-3մլ):

Բալենու երկարակնճիթ - 6-9 մմ երկարությամբ բզեզ է: Վնասում է բալենուն, կեռասենուն, սալորենուն և ծիրանենուն: Պայքարի համար սրսկել Ամպլիգո 0.3 լ/հա (10լ ջրին 3մլ), Մովենտո 0.8-1.5 լ/հա (10լ ջրին 8-15մլ), Կարատե զեոն 0.5 լ/հա (10լ ջրին 5մլ):

Պտղացեց - (կորիզավորների ցեց) շատ նման է խնձորենու ցեցին: Սակայն բազմակեր է: Սնվում է ծիրանենու, սալորենու, բալենու տերևներով: Մեր պայմաններում պտղացեցը տարածված է բոլոր այն շրջաններում, որտեղ մշակվում է ծիրանենի և սալորենի: Պայքարի համար սրսկել Զոլոն 2,4 լ/հա (10լ ջրին 24 մլ), Սալոս 2,4 լ/հա (10լ ջրին 24մլ), Շանս պլյուս 1,5 լ/հա (10լ ջրին 15մլ):

Պտղացեց

Սալորենու աղոցող

Սալորենու գխտորատիզ

Սալորենու աղոցող - տարածված է հյուսիս-արևելյան շրջանների և Երևանի շրջակա այգիներում: Սալորենուց բացի վնասում է նաև շլորենուն: Պայքարի համար պսակաթերթերը թափվելուց հետո սրսկել Անթիո 2 լ/հա (10լ ջրին 20մլ), Չելլենջեր 2 լ/հա (10լ ջրին 20մլ), Բիսուպեր 1,5-2 լ/հա (10լ ջրին 15-20 մլ):

Սալորենու գխտորատիզ - հասցրած վնասից տերևների վրա առաջանում են փոքր ուռուցքներ, որոնցից հետագայում մի քանիսը ձուլվում են և առաջացնում ելուստներ: Ուժեղ վնասված ծառերի աճը համարյա կանգ է առնում, իսկ բողբոջների հիմնադրման տեղում առաջանում են տզերով լեցուն գխտորներ: Պայքարի համար ծաղկաթափից անմիջապես հետո ծառերը սրսկել Ագրոր 2 լ/հա (10լ ջրին 20մլ), Անթիո 2 լ/հա (10լ ջրին 20մլ), Դանադիմ 1.9 լ/հա (10լ ջրին 20մլ):

Պատրաստել է